

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նվիրվում է Հայկ Ասատրյանի 105-ամյակին

Պատմությունից դասեր քաղելու կամքը միայն քաղաքակիրթ ազգերին բնորոշ հատկություն է. դա մեզ պատգամել է քերթողահայր Մովսես Խորենացին՝ «Օննդարանություն հայոց մեծացն» ավարտելով խորհրդածական խոսքով, առաջին հերթին ողբալով (թագավորների ու քահանաների հետ միասին) խորհրդականների և ուսուցանողների անհետացումը: Դրա հետևանքով ոչ միայն վտանգվում է երկրի խաղաղությունը, այլև արմատավորվում անկարգություն, հաստատվում տգիտություն:

Մեզ մոտ սովորություն է դարձել որևէ մեծ գործչի ներկայացնել միջավայրից կտրված, ինչը բնավ չի նպաստում նրա էությունը բազմակողմանիորեն ու գիտական պատշաճ մակարդակով բացահայտելուն: Հայոց գաղափարախոսության սյուներից Նժդեհը, մանավանդ հասուն տարիքում, գործել է արտակարգ ստեղծագործական միջավայրում՝ մասնավորապես իր կողքին ունենալով բացառիկ մտավոր կարողություններով օժտված այնպիսի մտավորականի, ինչպիսին փիլիսոփայության դոկտոր Հայկ Ասատրյանն է: Այս երկու մտածողներն ուշադիր հետևել են միմյանց հոգևոր զարգացմանը, ավելին, հարկ համարել հրապարակավ և ոչ միայն մամուլով, այլև տեսական-վերլուծական հոդվածներով հանրությանը ներկայացնել գաղափարակից ընկերոջ որևէ լուրջ ուսումնասիրություն՝ առաջաբանի ձևով: Մեր հայտնաբերած արխիվային նյութերը վկայում են, որ Գ.Նժդեհը 1944թ. հոկտեմբերի 12-ին, բանտային նախաքննության ժամանակ խոստովանել է, որ դեռևս 1941թ., մինչև Գերմանիայի՝ ԽՍՀՄ-ի վրա հարձակումը, ինքը և Հայկ Ասատրյանը Գերմանիայում հայերի դեմ ռասայական հալածանքների առաջն առնելու գործնական միջոցներ են ձեռնարկել: Եվ միասին բանտարկվել ու խորհրդային արքայազնությունում են անցկացրել իրենց կյանքի վերջին տարիները: Այլ խոսքով՝ բախտակից ընկերներ են:

Հայտնի է, որ ՀՀ առաջին նախագահին ազգային գաղափարախոսությունը համարում էր կեղծ, մտացածին հասկացություն: Մակայն շատ ժամանակ չանցած այդ հասկացության անհրաժեշտությունն այլևս ոչ ոքի կողմից կասկածի տակ չի առնվում: Եվ ներկայումս հրապարակի վրա են շուրջ 10 մենագրություն: Միայն վերջին տարիներին հանրության դատին են ներկայացվել ակադեմիկոսներ Ս.Սարիսյանի և Լ.Խուրշուդյանի մենագրությունները: Նրանցից մեկը գրականագետ է, մյուսը՝ պատմաբան: Մրցասպարեզ են մտել նաև բժիշկը (Ռ.Բարենց), մաթեմատիկոսը (Լ.Խաչատրյան), արձակագիրը (Ժ.Ավետիսյան) և անորոշ մասնագիտությամբ այլ անձինք (Ա.Վարպետյան և ուրիշներ): Այնուամենայնիվ, ծախսված

եռանդի ու միջոցների համեմատ, արդյունքները բավարար չավել գոհացուցիչ չեն:

Ո՞րն է պատճառը: Շրջանցվել է մի կարևոր հանգամանք. թեման իմաստասիրական է, հետևաբար, համապատասխան գիտական պատրաստությունը, այդ թվում՝ գրականության իմացությունը, հաջողության կարևոր նախապայմաններից են: Այդ բացը ակնառու է Հայկ Ասատրյանի գիտական ժառանգության հենքին:

Ոգու մշակումը՝ ազգի հղացումների բյուրեղացում

Անուրանալի են դոկտոր Հ.Ասատրյանի մեծ ծառայությունները ազգային գաղափարախոսության հիմքերի մշակման, ցեղակրոնի ու տարոնականության հայեցակարգերի հիմնավորման մեջ:

Նա ծնվել է 1900թ. Ալաշկերտում, ուսումը շարունակել Երևանի թեմական դպրոցում: 1918-1920թթ. նրա խմբագրությամբ Երևանում լույս է տեսնում «Շանթ» թերթը: Հ.Ասատրյանը 1921թ. փետրվարյան ապստամբության մասնակիցներից է: Դրա ճնշումից հետո անցել է Պարսկաստան, Թավրիզ: Շուտով, Գ.Նժդեհի ընկերակցությամբ մեկնել է Եվրոպա, ուսանել նախ Բեռլինի բարձրագույն քաղաքական դպրոցում, ապա՝ Պրահայի գերմանական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում՝ 1930թ. ստանալով իմաստասիրության դոկտորի աստիճան: Կանտի ու Նիցշեի պաշտամունք է ունեցել և, բնականաբար (ուսանողական ընկերոջ վկայությամբ), աննյութասեր էր, «կյանքի հաճույքներուն վրա քամահրանքով նայող...Կատեր սուտն ու կեղծիքը, շողոքորթությունն ու քծանքը, մարդոց թերությունները կըսեր իրենց ճակատին»: Սոֆիայում ուսուցիչ է աշխատել Գևորգ-Մեսրոպ ճեմարանում, միաժամանակ հանդիսացել ՀՅԴ տեղի ԿԿ քարտուղարը: 1932թ. Սոֆիայում Ասատրյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ լույս է տեսնում «Խռովք» իմաստասիրական-գիտական ամսագիրը, իսկ 1936թ. Ն.Աստվածատրյանի հետ՝ «Յեղ և Հայրենիք» կիսամյան: 1937թ. հեռացվել է ՀՅԴ շարքերից: 1937թ. Նժդեհի համագործակցությամբ հրատարակում է «Ռազմիկ» կիսաշաբաթաթերթը, որը ցեղակրոն կազմակերպության աջ պաշտոնական խոսափողն էր: 1926-1939թթ. Ն.Աստվածատրյանի հետ հրատարակել է «Տուրուբերան» հայրենակցական միության «Տարոնի արծիվ» պաշտոնաթերթը: 1945թ. ձերբակալվել է՝ դատապարտվելով 16 տարվա ազատազրկման: 1955թ. ծանր հիվանդ վիճակում ազատվելով բանտից՝ վերադառնում է Սոֆիա: 1956թ. հունվարի 13-ին հանկարծամահ է լինում:

Տեղափոխվելով Բուլղարիա՝ Հ.Ասատրյանը բեղուն գիտական-հասարակական գործունեություն է ծավալում՝ դառնալով Նժդեհի գլխավոր, գուցե միակ խորհրդատուն: 1942թ. լույս է տեսնում նրա «Հայաստան - արիական նախադիրք Առաջավոր Ասիայում» աշխատության Ա հատորը (2-րդ հրատ.՝ Եր., 2000թ., հրատարակիչ՝ Ազգայնական ակումբ), իր տեսակի մեջ եզակի մի գործ, ուր ներկայացված է Հայաստանը Արևելք-Արևմուտք հակամարտ ուժերի շփման կետում: «Խռովիչ ճշմարտությունների մի գիրք». այսպես է վերնագրված գրքի՝ Նժդեհի առաջաբանը: Այդ ի՞նչ «խռովիչ ճշմարտություններ

րի» մասին էր խոսքը: Եվ ինչո՞ւ խոռվիչ: Հ.Ասատրյանի գիրքն սկսվում է «Հայ հերոսականի ողբերգությունը» վերտառությամբ բաժնով և ավարտվում «Իմաստի ողբերգությունը» զուտ փմաստասիրական, ամփոփիչ բաժնով: «Որպես արիականության թե քրիստոնեության առաջամարտիկ՝ հայը գործեց ճակատագրի զինվորի կամքով և նվիրումով, իր քաջությունն օծելով սրբությամբ, իր սրից անբաժան պահելով խաչը», - գրում է նա՝ միաժամանակ արձանագրելով Արևելքում իր ազգին վիճակված «մենակության ողբերգությունը»:

Հ.Ասատրյանի աշխատությունները ներկայացնում են ապրված ճշմարտություններ՝ ազգային ապրումի, ոգու մշակումը՝ դիտարկված որպես ազգի մեծ հղացումներ: Ի հեճուկս ճակատագրի, երբ ժողովուրդը, որպես զանգված կրելով իր խաչը, «իր կենդանությամբ տեսավ իր անձի դիակը» (Եղիշե), այդուհանդերձ, նա մնաց ոգու ազգ: Ըստ Հ.Ասատրյանի, հայոց մեծագույն նվաճումներից մեկն էլ այն էր, որ «քրիստոնեությունը վերածեց ազգային դավանանքի, ստեղծեց ազգային մի եկեղեցի, որն «աշխարհիս վրա ամենից ավելի ներկայացնում է մի ազգի ոգու մարմնացումը»: Այս ծանր օրերին հարկ է մեկ անգամ ևս շեշտել այս ճշմարտությունը և միաժամանակ հիշեցնել կրոնացեղագրական ծանրագույն պայմաններում քրիստոնեության մեր ցեղի մատուցած ծառայությունը: Այս առումով է Նժդեհն առաջին հերթին առանձնացնում մեր ազգի հոգևոր գորութենականությունը, ապա՝ կենսաբանական իր բարոյականը դարերի ընթացքում անխաթար պահպանելու կարողությունն ու վերջապես՝ իր հանդեպ Եվրոպայի ցուցաբերած անարդար վերաբերմունքի դիմաց՝ մարդկությանն իր ծառայությունները: Բայց ինչպես Գ.Նժդեհին, այնպես էլ Հ.Ասատրյանին առաջին հերթին մտահոգում է հայի անտեղյակությունն իր դժբախտության հիմնական պատճառներին: Այդպիսի անձը դառնում է «առօրեահոգ, տեսլագուրկ, անհամերաշխ, պառակտյալ ու պարտվողական, որով և անընդունակ վերանորոգումի, հերոսականի, նորակերտումի, անընդունակ երբևիցե տիրապետելու իր ճակատագրին»: Ահա թե ինչու այս դեպքում հայասիրական լուրջ քարոզչության կազմակերպումն օրվա հրամայական է դառնում: Բայց դա պետք է տանել պատշաճ մակարդակով, և դրա լավագույն օրինակն ունենք, ահավասիկ՝ Հ.Ասատրյանի գրքի առաջին գնահատականը. «Առաջին անգամ է, ինչ հրապարակ է դրվում մի գիրք, արժանի մեր ցեղի անցյալին, օրվա մեր տառապանքի մեծության և մեր դատին: Դա պատկանում է ճշմարտորեն մեծ այն մատյանների կարգին, որոնք գալիս են խոռվելու և լուսավորելու ընթերցողի գերագույն խղճմտանքը», - գրում է Նժդեհը:

Գ.Նժդեհը պնդում է, որ անհրաժեշտ է լուսավորել ընթերցողի ոչ միայն միտքը, այլև խիղճը: Եվ ոչ միայն լուսավորել, այլև խոռվել, ասել է թե՛՝ երևույթները դիտարկել նոր տեսանկյունով: Ռուսաստանի Դաշնությունում «ազգային գաղափարն» ավելի ընդգրկուն ծավալով է քննության առարկա դարձել, ըստ որում՝ չորջանցելով այդ բնագավառում ոչ հեռու անցյալի նվաճումները. դեռևս 1908թ. մայիսին Պետական դումայում իր ելույթով Ստոլիպինն արժևորել է ազգային գաղափարախոսությունը՝ հատկապես առանձնացնելով այն հանգամանքը, որ ազգային խնդիրները մոռացող «ժողովուրդները ոչնչանում են,

դառնալով հող, պարարտանյութ, որի վրա աճում և ամրապնդվում են ուրիշ, ավելի ուժեղ ժողովուրդները» [5, էջ 149]: Նույնն ավելի ընդգծված ձևով վերաբերում է Հայաստանի նման փոքր երկրին: Մինչդեռ այսօր մեզանում ոչ միայն այդ ծավալով և այդպիսի խորությամբ հիմնահարցը չի քննարկվում, այլև նկատվում են հակառակ միտումներ. Հայաստանում նույնիսկ արվեստագետի աշխարհաքաղաքացիության հրատապության խնդիրն է արծարծվում: Մինչդեռ ռուս մտավորականության ներկայացուցիչներն ազգային արժեքների և իդեալների պահպանումը համարում են «թշնամի ուժերին հակազդեցության հզոր զենք» [6, էջ 32]: Ըստ որում, այս դրույթը պաշտպանվում է ոչ միայն անհատ մտավորականների, այլև քաղաքական կազմակերպությունների կողմից. ազգի հոգևոր ուժերի հզոր պաշարները համարվում են հատկապես ճգնաժամային պահերին փրկության ներուժ: Հատկանշական է, որ «Ռուսաստանի վերածնության մանիֆեստ» խորագրով ծրագրային փաստաթղթերի ժողովածուն կազմվել է՝ հիմք ընդունելով նշանավոր իմաստասերների (Ի.Իլյին, Ն.Բերդյաև, Կ.Լեոնով, Վ.Սոլովյով և ուրիշներ) ժառանգությունը. ռուսական գաղափարախոսությունը, որպես կանոն, դիտվում է իբրև սովորույթների և արդի նվաճումների համադրություն: Ցավոք, Հայաստանում նմանատիպ համընդգրկուն աշխատություն դեռևս չկա: Այդ բնագավառում առկա բացը զգալիորեն լրացնում է Հայկ Ասատրյանի երկերի «Հատընտիր» ժողովածուն (Երևան, 2004թ., հրատարակիչ՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն): Փիլիսոփայության դոկտոր Հ.Ասատրյանը, լինելով գերմանական համալսարանի շրջանավարտ, ասել է թե՛ տեսական լուրջ պատրաստություն ունենալով, քննության առարկա է դարձրել հայոց պատմության հանգուցային հարցերը՝ քաջատեղյակություն դրսևորելով ոչ միայն հայ պատմագրության ու փիլիսոփայության, այլև արվեստի բնագավառներում: Արդի գիտությունը (Գ. լե Բոն, Է.Ֆրոմ, Կ.Յունգ և ուրիշներ) գտնում է, որ յուրաքանչյուր ազգի պատմություն հարկ է վերաշարադրել հատկապես ազգային հոգեբանության հայեցակետից: Պատմությունը համարվում է ժողովուրդների բնավորության արդյունք, իսկ ժողովրդի ճակատագիրը՝ նրա բնավորության ու հավատալիքների գորեղ ազդեցությամբ իրականացած պատմություն: Լե Բոնը բնավորության մեջ առանձնացնում է քաջությունը, էներգիան, կամքը, հաստատակամությունը, անձնագոհությունը, ինքնատիրապետումը և ընդհանրապես բարոյականությունը՝ որպես օրենքների նկատմամբ սերնդեսերունդ փոխանցվող հարգանք: Պատմաբան Լ.Խուրշուդյանն իրավացիորեն նշում է, որ պատմահոգեբանական հիշյալ գործոնները հայոց «պատմագիտության մեջ միշտ չէ, որ հաշվի են առնվում» [4, էջ 19]: Հայկ Ասատրյանի աշխատություններն այս առումով երջանիկ բացառություն են: «Հայ հերոսականի ողբերգությունը» վերտառությամբ առաջաբանում, որպես քաղաքակրթության մեջ հայի ներդրում-առանձնահատկություն, հեղինակն առանձնացնում է զինվորական ոգու մշակումը, որ հռոմեացի բանաստեղծ Օվիդիոսը բնութագրել է իբրև «վագրային»: Հայոց «զինվորական բարոյականը հենվում էր «սրբության ուխտի» վրա, և դեռ հինգերորդ դարից էլ առաջ պատգամում էր. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր»... այս պատգամն իր դրսևորումն ունեցավ, Ցիցերոնի խոսքերով՝

«Ասիայի մեծագոր արքա» Տիգրան Մեծի գործունեության մեջ»: Այնուհետև Հայաստանն ունեցավ Մամիկոնյան դյուցազնաշունչ գորականներին, որոնք իրենց ճակատին կրեցին արիական ցեղի ամենամեծ նվիրումն ունեցող մեծագործության կնիքը: Նրանց ղեկավարությամբ էր, որ կազմակերպվեց հին աշխարհում այնքան հռչակված հայկական այրուձին: Հայր ամենավայրագ շրջապատի մեջ իսկ մնաց անխորտակելի՝ հավատարիմ իր առաքելությանը: Եվ ինչպես Հ.Ասատրյանն է ասում. «Ամենախոր հուսահատության մեջ իսկ, բարոյապես թե իմաստապես չկտրվեց Եվրոպայից, մնաց ոգու ժողովուրդ՝ տարածելով Արևելքում Եվրոպայի ոգին, բառը, գիրը, քաղաքական տեսիլքը»: Այս իմաստով Հայաստանը մնում էր հակամարտ երկու աշխարհների՝ Արևելքի և Արևմուտքի շփման կետ և փոթորկալից պայքարի առաջավոր դիրք:

Պատմաստեղծ հոգեբանական գործոնը

Ցեղակրոնի ու տարոնականության ուսմունքը Նժդեհի և Ասատրյանի կարևորագույն ներդրումն է հայոց գաղափարաբանության կառույցում: Ցավոք, նույնիսկ անկախություն նվաճած ՀՀ-ում կան մտավորականներ, որոնք խրտնում են «ցեղ» բառից: Հարկ է նշել, որ այդ գույգ գաղափարների տարողունակ բովանդակությունը դեռևս պատշաճ փիլիսոփայական մակարդակով չի ներկայացված հանրությանը, և շատերին թվում է, թե այդ ուսմունքը սոսկ քարոզչական կերպարանքով մտակառույց է՝ ոչ ավելին: Մինչդեռ այն գիտատեսականորեն լրջորեն հիմնավորված, եվրոպական ու ամերիկյան իմաստասիրական, մարդաբանական ու հոգեբանական (ինչու չէ՝ նաև կենսաբանական) գիտությունների նվաճումների վրա խարսխված ամբողջական ու միակուռ ուսմունք է: Բայց, նախ և առաջ, այն հայկական միջավայրի ու հայոց մտքի տքնանքի արգասիք է (Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Հովհան Օձնեցի և այլք): «Հայկական բարձրավանդակի ընդհանուր բնութագիրը» ներկայացնելով՝ Հ.Ասատրյանը շեշտադրում է երկրի «ահարկու հրաբխականությունը», հնոց հիշեցնող, «հրոյ և ջրոյ» մի աշխարհ, որի «կուրծքը հսկայական մի ամբար է բնաուժական գորույթի»: Շրջապատող երկրներից այն առանձնանում է որպես «վիթխարակարկառ տանիք», Խորենացու բնորոշմամբ՝ «վեհագույն բարձրավանդակ»՝ կազմված լեռնաձալքերից: Անհնար է շրջանցել այն միտքը, որ «Արարատ լեռը, Սևանա լիճը և Արածանի գետն իրենց վեհությամբ ու խորհրդավորությամբ հավիտենական ներշնչարաններ են եղել» ու կան: Ըստ Հ.Ասատրյանի, հրաբխային գործոնի դերը մեր երկրում ավելին է, քան Նեդոսինը՝ Եգիպտոսում: Հրաբխային գորույթը զարդանկարել է մեր երկիրը զմայլելի բարձրաքանդակներով, վեհափառ լեռնագագաթներով ու գեղանի հովիտներով և ամենակարևորը. մարդկանց համակելով լինելիության տեսլականով՝ նրանց օժտել է տիեզերական ապագայատենչությամբ: Հ.Ասատրյանի համար կենսական արժեք է ներկայացնում այն հարցը, թե ինչպես են ազդել այդ երևույթները մեր ցեղի հոգեմարմնական կառույցի վրա: Հայր, ըստ Հ.Ասատրյանի, նախ և առաջ ոգու մարդ է՝ օժտված կենսաբանական գերաստիճան դինամիկայով: Նա հին ցեղ չէ այն իմաստով, որ ունի «լինելիության

նկարագիր, որն իր ցայտուն արտահայտությունն է գտել Վահագնաճնության երգում, «Մասնա ծռեր» էպոսում, Նարեկացու «Առ ուղեկան յավիտենական»-ում, Ջիվանու «Ձախորդ օրեր» երգում, որոնց մեջ հավիտենականի կարոտն առկա է ամենուրեք: Անմահական «ջրերի ու խնձորների» դասական առասպելների աշխարհի է Հայաստանը: Ահա թե ինչու հայն ամենից առաջ պետք է կառչեր Հիսուսի «հանդերձյալին»: Հայր ներշնչական տիպ է, իսկ անմահության զգացումը տիեզերական հավիտենականի մեծագույն ներշնչումն է: Ահա այս ուժերն են «մեր անցյալը դրոշմել հերոսականի կնիքով՝ ցեղը և իր հոգևոր մեխանիզմ տարոնականությունը» [1, էջ 40]:

Այստեղ մենք գործ ունենք հստակ ձևակերպված մի բանաձևումի հետ, որը բանականության ճիգի արգասիք է, սակայն նրա գոյացումը պայմանավորված է որոշակի դրդապատճառներով: Ճշմարտության կազմավորման մեջ վճռական դեր ունեն երկու ազդակներ՝ միտքը և «գոյզացողության զինակիր կամքը»: Ընդամին, կենսագործ են այն ճշմարտությունները, որոնց կազմակերպիչները՝ միտքն ու կամքը, ներդաշնակ են՝ միակողմանի չափազանցումից զերծ, ասել է թե՛ չափի զգացումով հաշվի են առնված ես-ի բանական իրավունքներն ու կենսաբանական շահերը: Այդպիսի ճշմարտությունները Հ.Ասատրյանը բնորոշում է որպես ամբողջական՝ անձի արգասիք, որի ենթական հանդես է գալիս որպես ամբողջական բանական և կենսաբանական էակ: Միաժամանակ՝ Այլ կերպ ասած՝ այդպիսի անձնավորությունը բարձր խառնվածքի (տեմպերամենտ) և ներքին ուժականության («դինամիկա») կրող է: Ցեղադրոշմ անձը «դարերի սիրտը բռնում է ձեռքը և ճմլում՝ մեղրամոմի պես», - Նիցշեի հանգով նշում է Հ.Ասատրյանը: Մակայն հետևելով օտար հեղինակի մտակառույցին՝ նա որպես իր հավատամքի հիմք ունի հայոց պատմությունն ու ազգային մտածողության սլացքը: Ահավասիկ, Դավիթ Անհաղթի օրինակը, որը, հերքելով Պիրհոնի թերահավատությունը, հիմնավորեց իմացաբանական լավատեսությունը՝ կարելիապաշտությունը, որը շատ կարևոր հանգամանք էր Հռոմի ու Պարսկաստանի համար կռվախնձոր դարձած Հայաստան աշխարհի, ասել է թե՛ հուսահատության շեմին հայտնված հայ մարդու համար: Ըստ Դավիթ Անհաղթի՝ «իմաստունը նա է, ով ընդունում է կարելիությունը, այսինքն՝ լավատեսորեն ձգտում է հնարավորի իրականացմանը» [էջ 19]: Ցեղի սահմանումը Հ.Ասատրյանը տալիս է՝ ելնելով իմաստասեր Հովհան օձնեցի կաթողիկոսի հետևյալ մտքից. «... ստուգապես ծնունդ այնմ ասեիր, ուր հավելու անձն, նույն մնալով բնությունն», ասել կուզի՝ «բնությունը» ինքը՝ ցեղն է, ցեղը՝ նախ և առաջ որպես բնության պահպանման գորութենականություն, նկարագիր և խառնվածք: Այդ ժառանգականության ընթացքում անձը կրում ցեղը բնորոշող մարմնական ու հոգեկան բնածին գծերը: Արդյունքում՝ ցեղը ներկայանում է որպես միասուրյուն և ոգի, որով տվյալ հանրույթը ներկայանում է որպես առանձնատիպ: Հ.Ասատրյանն իր «Նախնական ծանոթություններ ցեղի մասին» արժեքավոր ուսումնասիրության մեջ հիմնվել է հանրահայտ մարդաբանների ու հոգեբանների (Հանս Գյունթեր, Շայդտ, Ֆիշեր, Ֆրից Լենց և ուրիշներ) հետազոտությունների արդյունքների վրա՝ միաժամանակ նշելով, որ այս նշանավոր գիտնականների սահմանում-

ները «դեռևս սպառիչ բան չեն ասում ցեղի ծագման մասին»: «Ցեղը կենսաբանական երևույթ է, բայց նրա ծագումը կապված է գոյի ընդհանուր խնդրին... Նա մեզ տանում է մինչև բնագանցության մարզը: Ցեղը որքան բնություն է, նույնքան էլ ոգի»: Հեղինակը գտնում է, որ հարցի լուծումը կախված է ինչպես բնագիտության, այնպես էլ պատմության տվյալների բնագանցական ընդհանրացումից: Խոսքն առաջին հերթին հայոց պատմության ու մշակույթի մասին է, ինչին Հ.Ասատրյանը տիրապետում է գերազանցորեն: Մինչև իսկ հարցի լուսաբանման նպատակով «Պատմության տվյալների բնագանցական ընդհանրացման» պատրաստ հեղինակը գործին ձեռնամուխ չի եղել սոսկ մաքուր իմացական սիրուց (ինչպես Սպինոզան կասեր՝ «*amor die intellectualis*»-ից), այլ Հայրենիքի ճակատագրով տագնապած: «Ապրում են այն ժողովուրդները, որոնք ցեղորեն օժտված են միջավայրն իրենց պատշաճեցնելու և նրան հարմարվելու ընդունակությամբ», - գրում է Հ.Ասատրյանը, մի անձնավորություն, որն ապրում էր Հայրենիքից դուրս, օտար ավերում, միջավայր, որն առանձնապես աչքի չէր ընկնում հոգևոր պահանջմունքով, բայց որտեղ ստեղծագործողը լիահունչ արարում էր՝ իրեն վերապահվածն անելով առանց կուրծք ծեծելու: Այդպիսին էր մտավորականի նրա պահվածքը, քանզի նա ճշմարիտ իմաստասեր էր՝ երկու ոտքով ամուր կանգնած մայրենի մշակույթի հողին: Գերմանական համալսարանավարտ դոկտոր էր, բայց կենսագրությամբ ճշմարիտ հայ մարդ, հայի հոգսով ու ճակատագրով ապրող անձնավորություն: «Կարողացա՞ն հայերը... նպատակահարմար կերպով լրացնել կենսաբանական այս պահանջները». հարց է բարձրացնում Հ.Ասատրյանը՝ նկատի ունենալով միջավայրն իրենց պատշաճեցնելու, ինչպես նաև նրան հարմարվելու կարողությունը: Նրա պատասխանը բացասական է, և դա է համարում Հայաստանի ողբերգության պատճառը: Այսօր Հայաստանի ողբերգության պատճառներին ավելացել է նաև մեկը. ազգը ապակողմնորոշվում է ասպարեզում հայտնված ոչ բանիմաց անձնավորությունների խոսքի տարափից: Ահավասիկ՝ «Վերադարձի վերջին օղակը» հավակնոտ տոնով գրված հոդվածը (հեղ.՝ Թադևոս Խաչատրյան, «Առավոտ», 11.10.04թ.): Հեղինակը գտնում է, որ «մեր լեզվի ունիվերսալ որակը... ստերջանում է չհերկված խոսքանի առջև՝ փիլիսոփայության»: Հեղինակն ասենք թե չի ուզում ճանաչել գորավաք Նժդեհի իմաստասեր լինելու հանգամանքն ու մանավանդ լեզվաշինարարական տաղանդը: Բայց չէ՞ որ նրա կողքին եղել է արհեստավարժ փիլիսոփա Հայկ Ասատրյանը, որը գոնե ձևական առումով կասկած չի հարուցում, որ գերմանական համալսարանի կողմից ճանաչված դոկտոր է: Մի՞ թե նրա լեզվի որակը նույնպես թույլ է տալիս խոսել մեր լեզվի ունիվերսալ որակի ստերջացման մասին: Հետևենք հեղինակի թունոտ խոսքին. «Մանավանդ այն ակնհայտ իրողության պարագային, երբ մատների վրա կարելի է հաշվել անուններ՝ Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Տաթևացի և... կարկամում ես»: Իսկապես կարելի է կարկամել այսպիսի տգիտության առջև: Եվ այն անձնավորությունը, որը չի ուզում ճանաչել հայ փիլիսոփայության մեջ Տաթևացուց հետո որևէ մեծություն (նշենք գոնե երկուսին՝ Հայկ Ասատրյան և Կոստան Զարյան), փորձում է պատասխան գտնել այն հարցին, թե «որտեղ է կանգ առել հայ փիլիսոփայական միտքը՝

սեփական առարկան գտնելու փորձերը դատապարտելով ակնհայտ ձախողման և անհնարին դարձնելով հետագա ընթացքը»: Մեր փիլիսոփայության ապագայով տագնապողը այս դեպքում փրկությունը տեսնում է «հայ նշանավոր լեզվաբան և փիլիսոփա Էդմոն Ավետյանի կոչի մեջ՝ վերադարձ դեպի այն օղակը, «որ կարող է փրկօղակ լինել», այն մարդու, «որը չունեի բարձր գիտական կոչումներ, բայց իր մտահորիզոնով ու մտքի խորությամբ գերազանցում էր խորհրդահայ մի քանի տասնյակ ակադեմիկոսների» (*ընդգծումը մերն է*): Նախ, ո՞ր մնաց ստերջացող լեզվի խնդիրը, չէ՞ որ Ավետյանը գրում էր ոչ հայերեն, և ապա՝ այդ ո՞ր «մի քանի տասնյակ ակադեմիկոսների» մասին է խոսքը, երբ ապրող հայ ակադեմիկոս-փիլիսոփաները ընդամենը երեքն են, իսկ հանգուցյալների հետ միասին՝ հինգը: Գուցեն հեղինակը նկատի ունի ընդհանրապես հասարակագետներին, այդ թվում՝ Ավետիք Իսահակյանին (քանի որ Էդ.Ավետյանը վերջերս ներկայացվեց իբրև բանաստեղծ, հետմահու, ռուսերենով հրատարակված բանաստեղծական իր ժողովածուով, գերադրական աստիճանի որակավորումներով համեմված առաջաբանով. հեղինակ՝ անվանի երաժիշտ Վ.Սարգսյան): Խոսելով հայ փիլիսոփայության բացակայությունից՝ Թ.Խաչատրյանն ի վերջո հարց է տալիս. «Իսկ հայ ժողովրդին պե՞տք են փիլիսոփաներ»: Պարզվում է, որ «երջանկահիշատակ» Էդվարդ Աթայանը, ըստ Թ.Խաչատրյանի, «համաշխարհային մակարդակով 20-րդ դարի այդ խոշորագույն մտածողը, որի փիլիսոփայությունը հազիվ թե մինչև վերջ մարտելի լինի նաև այս դարի ողջ ընթացքում», հարցին իր պատասխանն է ունեցել [տե՛ս 12]: Հարկավ, չարժեր այսպիսի գերհավակնոտ խոսքը քննության առարկա դարձնել, եթե «Նաիրի» պետական հրատարակչությունը ևս տոն չտար նման «չհիմնավորված» խոսակցությանը: Այսպես, օրինակ, վերջերս հրատարակված Էդ.Ավետյանի փիլիսոփայական պրպտումների գրքի վերջին հատվածը վերնագրված է «Ի՞նչ է փիլիսոփայությունը»: Հեղինակը, չնայած գործը գրել է ռուսերեն, այդուամենայնիվ, իր պարտքն է համարում նախ՝ «խոսք ասել» հայ փիլիսոփայության մասին: Պարզվում է՝ սոսկ միջնադարի մտքին ծանոթանալով, նա ելել է այն համոզման, որ հայերն ընդամենը աշակերտել են հույներին և որոշ մակարդակի հասել... Չկա ոչ մի խոսք որևէ հեղինակի մասին, նույնիսկ Դավիթ Անհաղթի կամ Եզնիկ Կողբացու անունները չեն հիշատակվում, և, իհարկե, նոր ժամանակների փիլիսոփայություն, նրա տեսանկյունից, գոյություն չունի: Ուշագրավ է այն փաստը, որ դրանից հետո հեղինակն անմիջապես անցնում է 20-րդ դարի ռուս փիլիսոփայական մտքին: Նա, արհամարհանքով խոսելով Ֆրանկի ժառանգության մասին, անցնում է Բերդյակին: Տվյալ դեպքում կարևորն այն է, որ Էդ.Ավետյանը՝ «իր մտահորիզոնով և մտքի խորությամբ» մի քանի տասնյակ հայ ակադեմիկոսների գերազանցողը, հայ փիլիսոփա համարվելով, այսպիսի վերաբերմունք ունի հայ մտքի պատմությանը: Եվ այս պարագայում ինքնին հասկանալի ու բնական պետք է համարել նրա ժառանգությունը հանրությանը մատուցող գրախոսի նիհիլիզմը:

«Պլատոնն իմ ուսուցիչն է, բայց ճշմարտությունն ավելի թանկ է ինձ համար», - գրում էր Արիստոտելը: Էդ.Ավետյանը եղել է պետհամալսարանի այն 7 դասախոսներից

մեկը, որոնք ինձ համալսարանի դասախոսական աշխատանքից հեռացնելու առթիվ (1975թ.) համարձակվել էին գրավոր բողոք ուղղել հանրապետության ղեկավարությանը: Այդուամենայնիվ, ես իմ պարտքն եմ համարում կարծիքս հայտնել ոչ կոռեկտ, անվայելուչ հրապարակումների առթիվ՝ մոտիկից ծանոթ լինելով և նրա աշխատություններին («Смысл и значение», Ереван, 1979, աշխատությունը վկայակոչված է իմ «Ստեղծագործական մտածողություն» մենագրությունում՝ այն ժամանակ, երբ Էդ.Ավետյանը հոգեբուժարանում էր, ինչը չէր թույլատրվում անել, քանի որ իմ այդ քայլը քաղաքական մեղադրանքով կալանքի տակ եղած անձի տարփողում կհամարվեր): Ես դա արել եմ պարտքի զգացումից դրդված և նույնն եմ անում նոր սերնդի առջև իմ դասախոսական խղճի մտք: Նաև հիշենք Հ.Թումանյանին. ժամանակին վրդովմունք արտահայտելով «Մշակի» վախճանված խմբագիր Քալանթարի մասին մամուլում հրապարակված անհարկի գովաբանական խոսքերի առթիվ՝ մեծ բանաստեղծը գրում էր. «Ահա թե ինչեր են հնարավոր մեր մեջ: Մա ազգ չի, ժողովուրդ չի – խալիս է», այսինքն՝ ամբոխ, որը չի առաջնորդվում համամարդկային ճշմարիտ չափորոշիչներով: Մինչդեռ Հայկ Ասատրյանի ժառանգությանը ծանոթ լինելու պարագայում հնարավոր էր խուսափել առնվազն նրա կողմից մերկացված «բացարձակապաշտության» միտվածությունից: Տարոնականությունը, որը ներկայացնում է «ցեղի հոգևոր մեխանիզմը», բացառում է ազգային արժեքների հանդեպ մերժողական վերաբերմունքը: «Ի՞նչը կփրկի մեզ» հարցին Հ.Ասատրյանն ունի իր պատասխանը. մեր ցեղային թերությունների սրբագրումը, կենսաբանորեն ասած՝ ցեղային վերաշինությունը:

Ցեղ և Հայրենիք

Խորհրդային տարիներին ապրած ու կրթություն ստացած քիչ թե շատ շնորհալի ամեն մի անձնավորություն սրտնեղում էր տոտալ քաղաքական ռեժիմի պայմաններում: Ըմբոստացումը տարբեր կերպ էր դրսևորվում՝ երբեմն նույնիսկ ստանալով այլախոհության կերպարանք: «Դիսիդենտ» արտահայտությունը 60-ական թվականներից մտավ նաև հայոց բառապաշարի մեջ: Բովանդակությամբ հարազատ լինելով հայ այլախոհների էությանը՝ այն, այդուամենայնիվ, օտարածին էր՝ օտար միջավայրից փոխառված կողմնորոշում: Հայկական միջավայրում կար մի ամբողջ խավ, որը մեծացել ու դաստիարակվել էր ոչ հայկական մթնոլորտում՝ մանկուց համակերպվելով օտար լեզվին ու մշակույթին և կենցաղին ընդհանրապես: Այդ միջավայրում երբեմն ակամա հայտնված անձինք հաճախ ստիպված էին արդարանալ՝ փնտվելով հայկական դպրոցն ու մշակույթը իբրև գավառական մտածելակերպի դրսևորման ասպարեզ: Բոլոր դեպքերում, օտար մշակույթի մեջ հասակ առած անձնավորությունը, որքան էլ ձգտի գիտակցության հսկողության տակ պահել իր արհամարհանքը հայկականի հանդեպ, երբեմն անգիտակցականի դրսևորումով պոռթկում է՝ ջրի երես հանելով իր էությունը: Ռուսաստանի մտավորականներից ոմանք հրապարակավ իրենց տազնապն են արտահայտում այն առթիվ, որ մայրաքաղաքի ոչ ռուսական (մեծ մասամբ՝ անգլիական) դպրոցների շրջանավարտները բացահայտ արհամար-

հանք են դրսևորում ռուսաց լեզվի ու մշակույթի հանդեպ: Հայաստանում նույնպես նույն երևույթն ակնառու է՝ և ավելի շուտ աչք ծակող դրսևորումներով: Ինչ խոսք, բացառություններ կան: Բայց գաղտնիք չէ, որ մայրաքաղաքի օտարերկրյա բազմաթիվ ծառայությունների գրասենյակներում բարձր աշխատավարձով աշխատակիցներն այդ միջավայրից են: Սա մի բազմամարդ խավ է, որ իր ծանրակշռի տեղն ունի հասարակության մեջ, բայց չունի ցեղին պատկանելու զգացողություն ու պահանջունք: «Զոջումը մեծ առաքինություն է և ապագա կառուցելու բարոյական ուժ», - գրում է Հ.Ասատրյանը: Նա այն համոզմունքին էր, որ աշխարհը կփոխվի ինքնասրբագրումով, ասել կուզի՝ նորակերտումի անդուլ ճիզի նախապայմանը անձի կողմից զոջումի մեծ ողբերգանք ապրելու կամքն է: «...Ողբերգութենեն ավելի մեծ ստեղծագործական ուժ չկա երկնքի տակ: Ճշմարտորեն ողբերգել՝ կնշանակե գոյության ողջ դառնությամբ, ցավով, ցասումով, ոգորումով խորհրդածել ճակատագրի մասին»: Ինչ նպատակ ունի հեղինակը՝ այսպիսի ծանր խոսք նետելով հրապարակ: Անշուշտ, եթե ճակատագրի մասին է մտահոգությունը, ապա ենթադրվում է մտասևեռում ուժերի գերլարման ուղղությամբ. «Ի՞նչը կպակսի մեզ - պատմական զգացումը և միապատկեր, միասևեռ ապագայի խռովքը» (*ընդգծումը մերն է*): «Խորքով ապրել անցյալը, - գրում է նա, - այս է գլխավորը: Բայց այս խորքը միայն տարոնականությունը կրնա տալ, իսկ ապագայի նպատակ իմաստության խռովքը՝ ցեղակրոնությունը»: Տարոնականությունը հայոց պատմության իմաստավորման արգասիքն է՝ «հայ ցեղի հոգեբարոյական այն ուժը, որով դիմագծված է մեր պատմական անցյալը»: Հ.Ասատրյանն իր այս մտքի սեղմագիր էությունը բացում է՝ ներկայացնելով հայոց պատմության կարևորագույն հանգույցները: Տարոնի հայերը, որ գրավել էին Այրարատը, ըստ Հ.Ասատրյանի, որոշակի քաղաքական ուժ էին ներկայացնում՝ ունենալով նաև կազմակերպված կառույցներ: Այդ ուժը հայաստանաստեղծ, հայակերտիչ բնույթ և ուղղվածություն ուներ: Հեղինակը նկատի ունի նախ վահագնապաշտության խորհուրդը, ապա Արտաշիսյանների՝ Հայաստանը ազատ և քաղաքականապես ամբողջական դարձնելու վիթխարի կորովը: Հայակերտիչ այդ կորովի շղթան ներկայանում է հայոց քրիստոնեացման բարոյաքաղաքական խորհրդով, Ս.Մեսրոպի մեծագործությամբ, Մամիկոնյանների գերմարդկային հայրենասիրության դրսևորման դրվագներով, տարոնցի մատենագիրների ոգու արտահայտությամբ և, վերջապես, «Մշո Սուլթան Սուրբ Կարապետ» որակում-ըմբռնման հոգեբանությամբ: Այս բոլոր ոգորումներն ու նվաճումները Տարոնի ժողովրդի մտքի ու կամքի ծնունդ են, որոնք հաճախ իրենց ձևակերպումը ստացել են Այրարատի մեջ՝ տարոնցիներով բնակեցված: Հ.Ասատրյանը մեծ խորհուրդ է տեսնում հայկական այս երկու շրջանների՝ Տարոնի ու Այրարատի զինակցության մեջ, որոնք տնօրինել են հայոց ճակատագիրը: «Պատմական ճակատագիր» կոչվածը ենթադրում է և՛ բնագրի, և՛ գիտակցության, և՛ անբանականի, և՛ բանականի ներդաշնակ միահյուսում, որով դրսևորվում է կյանքն իր բոլոր հոլովույթներով: Այն ազգը, որը գուրկ է պատմական ճակատագիրը լիակատար վերապրելու կարողությունից՝ անընդունակ իր անցյալի մեջ որոնելու ներկայի խորհուրդը և ապագայի աստղը, այդպիսի ազգը գուրկ է

ընդհանրապես պատմական զգացումից, հետևապես՝ նոր պատմություն կերտելու կորովից: Այս առումով տարոնականությունը հայոց պատմական զգացման գիտություն է՝ յուրատեսակ ցեղային դաստիարակության ուսմունք: Ասել է թե՛ ունենալ ապագայի տեսլական: Հայոց պատմաստեղծ ուժի զենքերի կողքը ցեղակրոնությունն ու տարոնականությունն են: Ըստ որում, իմաստության ու ոգու զինանոցը տարոնականությունն է, խանդի ու խռովքի հնոցը՝ ցեղակրոնությունը: Հ.Ասատրյանի տեսլականում տարոնականությունը ներկայանում է որպես հայկական աշխարհայեցողություն, ազգային ընդհանուր դավանանք, ինչը, ցավոք, «չունի մեր ժամանակների հայությունը»: Կար ժամանակ, երբ «Հայոց քրիստոնեությունը» ազգությունն ի մի բերող աշխարհայեցողության դեր էր ստանձնել, և կյանքի կոչվեց «հայ քրիստոնյա» արտահայտությունը: Այդ ըմբռնումը Հ.Ասատրյանը շատ բարձր է գնահատում, որպես «հայոց պատմության ամենակենսփմաստ հղացումներից մեկը», որը որդեգրելով՝ Մամիկոնյանները հայկականությունը հանգեցրին բնագանցումի, ասել է թե՛ նրան հաղորդեցին աստվածաշնչյան երանգ: Դրա շնորհիվ Մամիկոնյանները ճշմարիտ աստվածապաշտություն, փառավոր հայրենասիրություն ու մեծ հերոսական ստեղծեցին: Մեր օրերին համահունչ է Հ.Ասատրյանի հետևյալ սեղմ արտահայտությունը. «քաջ կրնան ըլլալ շատերը, բայց հերոսական կստեղծե միայն նա, ով իր տքնության ու գործի, կյանքի ու մահվան խորհրդի մեջ կտեսնե Աստծո կամքի արտահայտությունը... հերոսը հավիտենականության բանաստեղծն է»: Ըստ որում, հեղինակն իր բանաստեղծական խոսքը հիմնավորում է փիլիսոփայորեն խորիմաստ կերպով. «Առանց էութենական խորքի իմաստ չունի մարդկային կամքը: Ուր էության բարձր զգացում կա, այնտեղ կա գոյությունը բնագանցելու, այսինքն՝ աստվածայինով լցնելու պահանջ» [էջ 92]: Ստեղծագործ են այն ազգերը, որոնց որդեգրած գաղափարների և հասարակական հարաբերությունների միջև հակասություն չկա: Այս միտքը առանցքային նշանակություն ունի: Հ.Ասատրյանը գտնում է, որ հային պակասում է բարոյական կայունությունը՝ սկզբունքայնությունը: Բարոյական անկայունությունը ստեղծում է մտածումի ցրվածություն, հետևաբար՝ նպատակի անորոշություն և, իհարկե, ես-ի ներքին պառակտում՝ երկփեղկում: Այս դիտարկումներից նա գալիս է այն ընդհանրական հետևության, որ «հայ կյանքի պառակտումները հետևանք են ազգային ընդհանրաբժեք և հանպարտադիր աշխարհայեցողության չգոյության»: Խոսքն այն մասին է, որ գոյիմաստ խոսքը լրացվի համահունչ անհակասական դատողությունների այնպիսի շարքով, որով հիմնական գաղափարը ամբողջական ու հասանելի տեսք է ստանում: Այդ գործն ընկած է ազգային մտավորականության ուսերին, որը, սակայն, չունի «գիտական պատրաստություն... և ընդունակ չէ մետաֆիզիկական խորքով և պատմափմաստասիրորեն հիմնավորված հայկական աշխարհայեցողություն ստեղծել» [էջ 94]: Մտավորականության ձախողման հիմնական պատճառը հայրենի երկրի յուրահատկության չիմացությունն է՝ օտարներից փոխանցյալ գաղափարներով որոճալու սովորությոը: Հ.Ասատրյանն իրավացիորեն նշում է, որ մթնոլորտը լի է իբր հայկական նշանաբաններով, բայց ոչ հայկական գաղափարախոսությամբ, բոլորը սկսում են «մարդ-

կություն, մարդկային» ընդհանուր բառերով և հայ զանգվածի փրկությունը տեսնում են սոցիալական այն բարեփոխությունների մեջ, որոնք կիրառվում են Եվրոպայում: Իրականում դրանք չեն բխում Հայաստանի ուրույն նկարագրից: Հ.Ասատրյանին բնորոշ է երևույթների նկարագրությունից անցնել դրանց բնութագրմանը: Ընդհանրապես սոցիալական վիճակն անցավոր է, «կա միայն ոգու և արյան հավիտենականություն: Եվ կենսաբանորեն առողջը այն ժողովուրդն է, որ արթուն բնագո ունի իր տեսակի հավերժացման համար... Կենսաբանական որակները՝ ոգին, արյունը կրնան կազմել գոյիմաստ աշխարհայեցողության հիմքը և ոչ թե պատմական կամ սոցիալական որևէ մտածում»: Խոսքն այն մասին է, որ աշխարհայեցողությունը պետք է ունենա բնագանցական խորք, և մինչև տարոնականության մշակումը հայ մարդն անուշադրության է մատնել կյանքի էաբանական հարցերը: Եվ քանի որ տարված է եղել օտար ճշմարտություններով, նրա փոխառյալ գաղափարները թույլ չեն տվել, որ բանականը և զգացմունքայինը ներդաշնակ լինեն, ասել է թե՛ պակասել է հարազատությունը, հետևապես՝ բացակայել են «պատմաստեղծ ճիգը և գործունեությունը»: Այս խոհերը պակասվում են մի խորիմաստ ընդհանրական խոսքով. «Գաղափարախոսական մեր բոլոր խարխափումները պայմանավորվեցան անով, որ մենք չունեցանք հայկականորեն հիմնավորված աշխարհայեցողություն: Անծանոթ մեր էաբանական խորքին ու ցեղին՝ իմաստությունը և ուղղությունը չառինք հայոց անցյալը վարող ուժերեն, այլ՝ Եվրոպայի ներկյան խռովող ընկերային հոսանքներեն» [էջ 96]:

Հայոց անցյալը վարող հոգևոր ժառանգության անկապտելի մասն է կազմում նաև Հ.Ասատրյանի փիլիսոփայական ստեղծագործությունը, որն արարվել է տառապանքով ու ցավով: «Բարոյական սպառազինություն», ահա այն զենքը, որ նա թողել է սերունդներին՝ նրանց, ովքեր պատրաստ են տքնելու հավիտենական Հայաստանի համար: Բայց բազում են կոչեցյալք, սակավ ընտրյալք, ովքեր ընդունակ են տանելու այն լույսը, որի աղբյուրը մեր պատմությունը վարող ոգեկան ուժերի իմաստասիրությունից է բխում: «Տարոնականությունը միայն հզորանքի ուսմունք չէ,- զգուշացնում էր Հ.Ասատրյանը,- այլ նաև ներցեղային սրբության փիլիսոփայություն, այսինքն՝ ոչ սովորական բարոյագիտություն»: Դա ուսմունք է ընտրյալների համար, ովքեր սեր ունեն առ իմաստը: Պատմությունը իրական դեպքերի արձանագրություն չէ, այլ՝ ոգու հայտնության: «Առանց ոգու իմացության կարելի չէ հասկանալ պատմությունը», մանավանդ որ ճակատագիրը լինում է անգիտակցականի կամքով: Իրերի հիմքը այն չէ, ինչ տեսանելի է պարզ աչքով, իսկ ոգին ընդհանրապես մատչելի չէ զգայնությանը, ուստի առանց բնագանցության և էաբանության հնարավոր չէ հասկանալ ոգին: Այս իմաստով Հ.Ասատրյանը տարոնականությունը բնորոշում է որպես մեր պատմության իռացիոնալությունը՝ անգիտակցականը, այլ կերպ ասած՝ ոգու այն տարերքը, առանց որի իմացության անհնար է խոսել ճակատագրի մասին: Երբ ազգն առաջնորդվում է պատմաստեղծ ոգու թելադրանքով, երազները իրականություն են դառնում: Հայրենիքը կայանում է տարոնատիպ հզորահոգի հայ մարդու վերաստեղծման միջոցով:

Հայոց բարոյական դաշտի ամրացման գերխնդիրը

Արևելք-Արևմուտք հարաբերության արժեքային համակարգերի համեմատական վերլուծությունը խնդրո առարկա դարձնելով՝ հեղինակն իր առջև ունի մի գերխնդիր. ամրացնել հայոց բարոյական դաշտը՝ այդ կարևորագույն խնդրի լուծման համար լծակ ծառայեցնելով խորհրդանշանի իմաստ ստացած ազգային արժեքները: Եվ ամեննին էլ տարօրինակ չէ, որ խորապես գիտական սույն աշխատության որպես վերջաբան-ամփոփագիր ընտրված է աննախադեպ մի ձև. թվարկված են մեր ազգի պատմության իմաստակիր անձանց կերպարները՝ Գրիգոր Լուսավորչից սկսած: «Ո՞րն է հայի ուժի գաղտնիքը» հարցին փորձելով պատասխանել՝ Հ. Ասատրյանը գրում է. «Հնարավոր չէ այս հատորում հանգամանորեն տալ հայերի ցեղագծերը, հոգեբանությունը: Մտածումով, հղացումով, կառուցողական ոճով, լեզվով և ռազմական կորովով արիական՝ հայերն իրենց աշխարհապրումով ալպիական են: Այդ պատճառով անհունորեն խորն է նրանց նվիրումի զգացումը, զորավոր՝ տոկալու կամքը, անխախտ՝ համոզումը, իմաստալից՝ ստեղծագործական երկունքը, խիզախ՝ ռազմական ոգին և խանդալից՝ հայրենասիրությունը: Այս ուժերն են, որ պահում են լուսատենչ այս ազգը... հայն իրեն զորավոր է զգում իր արժեքներով»:

Լայնածավալ ու խոր գիտելիքների տեր լինելով՝ Հ.Ասատրյանն ամենից առաջ քննախույզ մտքի տեր իմաստասեր է և իմաստապաշտ: Նրա համար խորհուրդն ավելի թովչական ու գրավիչ է, քան երևույթն ինքնին: Իմաստի ողբերգությունն է Հ. Ասատրյանի մտասնեուման կետը. հայոց ճակատագիրը ողբերգական է եղել: Հայր կամքի դրսևորումով և իր առջև որոշակի նպատակներ դնելով՝ ընդդիմացել է ճակատագրին: Եվ կատարվել է թվում է, թե անտրամաբանական մի բան: Ավելի բնական կլիներ, եթե այդ դժնդակ պայմաններում «հայոց գետը» ևս ցամաքեր, ինչպես պատահեց հարևան շատ ժողովուրդների հետ, բայց հայը զոյատևել է: Այդ առումով միշտ չէ, որ անտրամաբանականը անբնական է: Մարդկային կյանքը այլ օրենքի է ենթարկվում: Մարդն առաջնորդվում է իդեալով՝ հաճախ հակադրվելով իրական կյանքի թելադրանքին: Առաջնորդվելով իր ազգին հատուկ արժեքային հայտանիշներով՝ մարդն իր առջև դնում է որոշակի նպատակ, հետամուտ լինելով նրա իրականացմանը: Այս իմաստով է Հ.Ասատրյանը շեշտում, որ «նպատակը կենսաբանական մի պատրանք է, որով մարդիկ ձգտում են մոռացության տալ իրենց կյանքի անիմաստությունը»: Հայի դաժան կյանքն է ստիպում ժամանակ առ ժամանակ վեր կանգնել առտնին իրականությունից: Այս առումով է Ասատրյանը հային համարում հոգեկան զորավոր կենտրոնացման ընդունակ, իմաստապաշտ էակ, նաև նպատակային հրամայականի մարդ: Որպես իր այս մտքի ցուցանիշ նա վկայակոչում է Սիամանթոյի «Նպատակը տկարություն չի ճանչնար» ասույթը՝ այն դիտելով իբրև հայ ցեղի հոգեգծերի ճշմարտացի դրսևորում: Եվ, վերջապես, նրա մենագրության մեջ ասվածը բյուրեղանում է հետևյալ մտախոսացման տեսքով. «Իմաստն է կյանքի ամենաբարձր հղացումը... իմաստն է մտքի, ոգու, նպատակի հավիտենացուցիչը»:

Տարաբախտաբար, հայի կյանքում անբանական ուժերը, որպես կանոն, գործել են

իմաստի դեմ և ի հետևանս այս ամենի՝ «Ոգու և քառուի, բարոյականի և զգացումների, հավիտենական երազների (երազանքների) և անցավոր իրականության մաքառումից ծնունդ է առնում իմաստի ողբերգությունը»: Վերջինս նաև մենագրությունը պսակող բաժնի խորագիրն է:

Հայի հոգու խոռվքը Արևմուտքի ոգու տկարացման հենքին

Հ.Ասատրյանի մենագրության մեջ մեծ տեղ է հատկացված քաղաքակրթությունների և մշակույթների հարաբերության խնդիրներին: Այդ միտումը նպատակաուղղված է Հայաստանին վիճակված ճակատագրում Արևմուտքի և Արևելքի ունեցած պահվածքի պարզաբանմանը: Իրերի զարգացման բերումով 19-րդ դարում Արևմուտքը դրսևորեց ոգու տկարացում. Եվրոպական երկրների դիվանագիտական սուր մրցակցության պայմաններում մանրախնդիր շահերը դարձան գերակա՝ բարոյական հավատամքի համեմատ: Մինչդեռ կար ժամանակ, երբ «Միրտը դեռ կենդանի էր Եվրոպայում, ուստիև հավիտենականի կռահում կար նրա քաղաքական տեսիլքներում: Խիղճն ավելի արթուն էր, միտքն ավելի հավիտենատես: Բարոյականի կռահումի էակ էր մարդը», - խոր ափսոսանքով է գրում Հ.Ասատրյանը: Նույնիսկ միջին դարերում Ֆր. Բարբարոսայի նման խոշոր պետական-գորական գործիչը հաշվի էր նստում համընդհանուր բարոյական նորմերի հետ: Եվ, բնականաբար, նա մտահոգված էր նաև բարբարոսներով շրջապատված, արիական կղզյակ ներկայացնող Հայաստանի ճակատագրով, մանավանդ, որ նրա սահմանագծով էր անցնում Եվրոպականության և ասիական խորքերից եկող հորդանների միջև վտանգավոր գիծը: Սակայն հետագայում, մասնավորապես անգլո-ռուսական սուր մրցակցության պատճառով, խորտակվեց քրիստոնյա աշխարհի բարոյական համերաշխությունը: Դրան նպաստեց նաև Արևմուտքի ոգու ընդհանուր անկումը, որ հետևանք էր հասարակական տնտեսական զարգացման որոշակի միտումների: Եվրոպայում բնական գիտությունների բուռն զարգացման պայմաններում տիրապետող դարձավ պրագմատիկ-իմաստամերժ իրապաշտությունը, որն իր հերթին բերեց աշխարհայեցության սատնություն և ներկայապաշտ եսամոլություն: Տնտեսական գործոնը ճանաչվեց պատմության գլխավոր շարժիչ ուժ, իսկ քաղաքական ասպարեզում գլուխ բարձրացրեց մաստնականությունը: Դրանով իսկ քաղաքականությունը ներքաշվեց դիվանագիտական խարդավանքների մեջ: Այս պարագայում, ըստ Հ.Ասատրյանի, «Ավանդույթներից դատարկված, երջանկության իր գաղափարականով ներկայապաշտ այդ Եվրոպայում քրիստոնեությունը դարձավ կենսագոյությունը կորցրած հուշ, մարդկայնությունը՝ պերճախոսության ձև»: Պատմական հենց այս ժամանակաշրջանում ծայրահեղորեն սրվեց հայ և թուրք դարավոր հակամարտությունը, որը արիականության և մոնղոլականության անհաշտ պայքարի անդրադարձն էր: Խնդրո առարկա մենագրության մեջ «Հայաստանը Արևելք-Արևմուտք խաչմերուկում» թեման դիտարկվում է այդ հարաբերության մեկ կողմի՝ Արևմուտքի բովանդակության դիմամիկ զարգացման հենքին: Խոսքը Եվրոպայի տնտեսական շահերի տեղաշարժերի ու

բարոյական արժեքների կտրուկ վերագնահատման մասին է:

Այդ թեման բացառիկ ողբերգական բնույթ ստացավ 19-րդ դարի վերջին՝ ռուս-թուրքական պատերազմի ընթացքում. տասնամյակներ շարունակ Ռուսաստանի օգնությունը հայցող հայ քաղաքագետների ջանքերը, թվում էր, թե պետք է բաղձալի արդյունք տային: Հավաստիացումներ էր տալիս նաև ռուսական կառավարության ներկայացուցիչը: Ահավասիկ 1877թ. ապրիլի 12-ին արված այդպիսի մի հայտարարություն. «Հարյուրավոր տարիներ թուրքական լուծը ծանրացել է քրիստոնյա մեր եղբայրների վրա... ամեն ինչ պղծված է անհավատների ձեռքով»: Այսպիսի մթնոլորտում, ինչպես նշում է Հ.Ասատրյանը, հայ ժողովուրդը ցնծության մեջ էր, քանի որ Կովկասյան ճակատում ռուսական բանակը դեկավարում էին հայազգի զորավարներ Լորիս Մելիքովը, Տեր-Ղուկասովը և Լազարևը, որոնք նույնիսկ այցելելով Էջմիածին՝ ստանում են կաթողիկոսի օրհնությունը: Նրանք համոզված էին, որ սրբազան այդ պատերազմով փրկվելու էր նաև հարազատ ազգը: Բայց պատերազմից հետո բոլոր պատրանքները խորտակվեցին: Այդ կապակցությամբ Հ.Ասատրյանի գիրքը մղում է դառն խորհրդածությունների, և դրանց նախաձեռնողը ինքն է. «Կրոնապես պատվախնդիր մարդկանց թե ժողովուրդների համար զարհուրելին ոչ թե թշնամուց կրած նահատակության տանջանքն է, այլ հավատակիցների դավաճանության պատճառած ցավը»: Հայը լքված էր ինչպես Անգլիայի, այնպես էլ Ռուսաստանի կողմից: Ռուսական բանակի նահանջից հետո զանգվածաբար Ռուսաստան մեկնող հայ գաղթականներին ռուս զինվորները սահմանազլիսին կանգնեցնում են՝ պահանջելով հետ դառնալ և նստել մոխիրների վրա: Այդ առթիվ Հ.Ասատրյանն իրեն թույլ է տալիս անել հետևյալ դառը խորհրդածությունը. «Անիրավ մի դատավոր ավելի մեծ հոռետեսություն է սփռում կյանքում, ավելի է քանդում մարդկանց հոգիները... մահափորձի ենթարկում հավատը՝ դեպի բարոյականը, վիրավորում արդարության, սրբության զգացումը, քան հազար-հազարավոր ոճրագործներ՝ միասին»: Դառը ճշմարտություն, որ այսօր էլ չի կորցրել իր արժեքը: Այսպես է դրսևորվում իմաստապաշտ ժողովրդի զավակի իմաստասիրական ոգին:

Թուրքիան, գոտեպնդված մեծ տերությունների թողտվության քաղաքականությամբ, ազատ է զգում իրեն չարագործ նպատակադիր գործողություններում: Անգլիական հյուպատոսը 1878թ. աշնանն իր պաշտոնական տեղեկագրում արձանագրում է, որ քրիստոնյաների վիճակն ավելի վատ է, քան երբևէ եղել է. «Ամեն տեղ յուրաքանչյուր քայլափոխին կործանումի և բռնության ոգին է հայտնվում հազարավոր ձևերի տակ»: Հետագա տարիներին շատ են հրապարակվել այս իրավիճակը ներկայացնող աշխատություններ: Դրանց մեջ Հ.Ասատրյանի մենագրությունն առանձնանում է երևույթի բարոյահոգեբանական վերլուծությամբ: Ահավասիկ այդպիսի մի դիտարկում. «Բարոյականի ծաղրանքը հզորների կողմից տառապյալների մեջ ստեղծում է ցասումի հուսալքություն - մի հոգեվիճակ, որ սնուցում է անտարբերությունը՝ դեպի ճակատագրի չարիքները, և հաճախ հանգում է մինչև իսկ նահատակության բաղձանքի»:

Հոգեբանական այդպիսի դրսևորումների պատրանքները ներկայացված են Վերֆելի հանրահայտ վեպում: Հ.Ասատրյանի գրքում նաև դրանց դրդապատճառները քննելու փորձ է արված:

Հայ-սեմական ոգիների հակամարտությունը

Նմանատիպ միտում կա նաև «Թուրք և բոլշևիկ զինակցությունը» խորագրով բաժնում: 1920թ. ապրիլի 15-ին կնքված դաշնագրի 5-րդ հոդվածով ադրբեջանական կողմը հանձն էր առնում ջանքեր գործադրել, որ Ռուսաստանն ու Թուրքիան մերձենան: Իսկ 7-րդ հոդվածով Ադրբեջանը և Թուրքիան պարտավորվում էին պաշտպանել միմյանց և գործել իբրև միացյալ բանակ՝ ընդդեմ Հայաստանի: Շատ ժամանակ չանցած Կարաբեքիրը խոստովանում է, որ բոլշևիկներն իրենց առաջարկել են անհապաղ պատերազմական գործողություններ սկսել Հայաստանի դեմ: Որո՞նք էին թուրք-բոլշևիկ զինակցության խորքային դրդապատճառները. «Բոլշևիզմը ռուս մարդու մեջ եղած ասիական տարերքի շարժն էր, իսկ տաճիկները ամեն տեսակետով ասիական ժողովուրդ էն»: Հ.Ասատրյանն իր այս դրույթը հիմնավորում է նաև Բաքվում կազմակերպված «Արևելքի ժողովուրդների համագումարի» (1920թ. սեպտեմբեր) նյութերով, որտեղ Ջինովևը, Ռադեկը, ձեռք ձեռքի տված Էնվերի և այլոց հետ, սուր են ճոճում Հայաստանի դեմ՝ այն հռչակելով իմպերիալիստական նկրտումների միջնաբերդ: Արժե նշել, որ էությանբ սեմական հրեա տարրը, որ դաշնակցում էր թուրքերի հետ, ոչ միայն իշխող դիրքեր ուներ Մոսկվայում, այլև եվրոպական երկրները միավորող 3-րդ ինտերնացիոնալում: Ուշագրավ է մասնակիցների կազմը. 1891-ից 1273-ը բոլշևիկ էին, որոնցից ընդամենը 104-ն էին ազգությամբ ռուս, մինչդեռ կային 235 թուրք ներկայացուցիչներ: Ամենազարմանալին հայերի բազմամարդությունն էր և նրանց ակտիվությունը՝ 157 հայ պատգամավոր: Համագումարը կոչվում էր արևելյան ժողովուրդների, մինչդեռ Չինաստանը ներկայացված էր ընդամենը 14, Հնդկաստանը՝ 8 պատգամավորներով, որի դիմաց չեչենները՝ 82, լեզգիները՝ 25 ներկայացուցիչներով: Ինքնին խոսուն փաստեր, որոնք վկայում են այդ խառնածողովի շինծու բնույթի մասին: Հայկական մեծաքանակ պատվիրակությունը ոչ միայն հանդուրժեց հայոց դահիճ Էնվերի ներկայությունը և նրա ելույթը, այլև թուրք-բոլշևիկյան զինակցությունն ամրագրող բանաձևը: Ավելին, միացյալ փոթորկալից այն ծափահարությանը, որ հետևեց համագումարի նախագահի (Ջինովևի) հետևյալ խոսքերին. «Այստեղ հաճախ է խոսվում Հայաստանի մասին: Միացյալ Հայաստան գոյություն չունի: Կա բանվորացուղացիական Հայաստան, որին ձեռք ենք մեկնում, և անիծյալ, ջարդարար, բուրժուական Հայաստան» (ընդգծումը մերն է): Անգորայի ներկայացուցիչ Ի.Թալին ավելի մանրամասնեց այս դրույթը՝ հայերին համարելով Արևելքից Թուրքիայի վրա հարձակված հրոսակներ, որոնք «գործում են կրակով, սրով և ռումբով»: Ջարմանալի չէ, որ նա իր խոսքն ավարտեց «Կեցցե՛ հեղափոխական Ռուսաստանը» կարգախոսով: Իսկ տխրահռչակ Էնվերը խոստովանեց, որ համագումարը նոր ուժեր է հաղորդում կարմիր բանակին, որը թուրքական մարտիկների պաշտպանն է:

Թուրք մարտիկների և կարմիր բանակի զինակցությամբ շուտով պատերազմ հրահրվեց ՀՀ-ի դեմ: Մեր կարծիքով, շարքային ընթերցողն առաջին անգամ է ծանոթանում այս գարհուրելի փաստերին՝ շնորհիվ Հ.Ասատրյանի:

Հայաստանի դեմ պատերազմական գործողություններում ինչպես թուրքերը, այնպես էլ ռուսները համաձայնության էին եկել դիմել դաժան միջոցների: Այդ մասին է ուղղակիորեն վկայում ռուսական 28-րդ զորամասի պետ Նեստերովսկու հետևյալ հրամանը. «Խուսափել մարդասիրական ամեն տեսակի միջոցներից և դաժան լինել ապստամբ բնակչության հանդեպ... Դիմադրողներին գերի չվերցնել... ավերել ամբողջ գյուղերը՝ հիշելով, որ դաժանությունն ու աններողամտությունը հասցնում են լավ հետևանքի՝ մանավանդ Կովկասում»:

Բաքվի համագումարն ունեցավ ահավոր բացասական մի հետևանք ևս. հայ 157 ծախված բոլշևիկ պատգամավորները, ոգևորված իրենց «շարքերի միասնությամբ», տեղերում քարոզչություն էին կազմակերպում՝ նպատակ ունենալով կազմալուծել ազգի մարտական ոգին: Նրանք բնակչության մեջ այն խաբկանքն էին ստեղծում, թե ինչպես Ադրբեջանն է համաձայնել (Նարիմանով) Ղարաբաղը զիջել Հայաստանին, այդպես էլ պետք է վարվի խորհրդայնացվող Տաճկաստանը: Ուստի իմաստ չունի պայքարել «կարմիր» թուրքերի դեմ, եկողները ոչ թե նախկին ջարդարար թուրքերն են, այլ «կարմիր զինվորները»: Այդ քարոզչությունը հիրավի կազմալուծիչ գործ կատարեց հայոց բանակում: Իր քաջությամբ հռչակված Ա գնդում բույն դրած բոլշևիկյան տարրերի սադրանքով զինվորների զգալի մասը հոկտեմբերի 30-ին հրաժարվեց անվանի հրամանատար, գնդապետ Մազմանյանի հրամանները կատարելուց և դա այն դեպքում, երբ ընդհուպ, մոտեցել էին թշնամու դիրքերին: Պատվախնդիր հրամանատարը և մի քանի սպաներ ինքնասպան եղան: Ինչպես հայտնի է, այդ օրը թշնամին, օգտվելով հայոց զորքի խուճապից, առանց շոշափելի դժվարության գրավեց Կարս բերդաքաղաքը: Թշնամին չխնայեց նույնիսկ շուրջ 6-7 հարյուր այն զանգվածին, որը կարմիր դրոշ պարզած դուրս էր եկել դիմավորելու բերդը գրոհողներին: Այնուհետև հայության համատարած հուսահատությունը և լքվածի զգացողությունը այլևս նոր խոյանքի հնարավորություն չէին թողնում նրան:

Ամոթի զգացումը ինքնամաքրման սկիզբն է, և այդ դռնով պետք է անցնի յուրաքանչյուր հայ մարդ, որպեսզի այլևս չտրվի դրսի դավադիր գաղափարական սադրանքներին: Ոչ ոք ապահովագրված չէ մտավոր այլասերումից, մանավանդ որ գայթակղությունը ներկայանում է գաղափարական պաճուճանքով՝ հասարակական իդեալի ներագդեցությամբ: Բարդ իրադրության մեջ քչերն են ընդունակ դատելու այնպես ուղղամտորեն, ինչպես 1921թ. փետրվարին խորհրդային կարգերի դեմ ժողովրդի ընդվզումի օրերին իրեն պահել է գերեվարված բոլշևիկ մտավորական Պապովյանը. «Այսպիսի պայմաններում ազգերից և ոչ մեկն է ընդունակ ապստամբության խիզախել: Իբրև մարդ՝ զարմանում եմ, իբրև բոլշևիկ՝ դատապարտում, իբրև հայ՝ հպարտ եմ»: Այլընտրանքային լուծում պահանջող իրադրությունում յուրաքանչյուր անձից պահանջվում է հստակ կողմնորոշում. ի՞նչն է նախընտրելի՝ հայ մնա՞լը, թե՞ կոմունիստ լինելը: Հ.Ասատրյանի համոզմամբ, հայ բոլշևիկներից շատերը պարզապես չկարողացան կռահել, որ հրեական ոգու միջնորդությամբ ծնված կուսակցությունը խորթ էր իրենց էությանը: Եվ զարմանալի չէ, որ այն զի-

նակցում էր թուրքի հետ: Այլ կերպ ասած՝ բոլշևիկները, «մտածելով հրեայի պես և գործելով թաթարի պես, կարողանում էին խուսանավել ռուսի պես»: Այսպես դատելու մեջ Հ.Ասատրյանը զինակից ուներ անվանի պատմաբան Ջոմբարտին, որը համայնավարությունը բնորոշել է որպես հրեական հղացում և մոնղոլական գործ: Այս կետում խնդիրն առնչվում է ցեղաբանական ուսմունքին. ինչպես Ասատրյանը, այնպես էլ Նժդեհը գտնում էին, որ հայը արիականության պատճառով Ասիայի նախադիրքին ավելի շատ թշնամիներ ունեցավ, քան զինակիցներ: Ասենք նաև, որ հայի արիականության խնդրի արծարծումը թելադրվում էր Երկրորդ աշխարհամարտի օրերին Գերմանիայում իշխող մթնոլորտով, երբ թուրքերից վարձու մի շարք գրչակներ հայերին վարկաբեկող քարոզչություն էին տանում՝ նրանց նույնացնելով գնչուների ցեղի հետ: Գերմանիայի տիրապետության տակ գտնվող երկրներում բնակվող շուրջ կես միլիոն հայությանը սպասվում էր հրեաների ճակատագիրը, ուստի Հ.Ասատրյանը մեկնում է Բեռլին՝ իր մենագրությունը գերմաներեն հրատարակելու նպատակով, հաստատելու համար, որ հայը արիական ազգ է: Ցավոք, այդ մտահղացումը հաջողությամբ չի պսակվել: Հ.Ասատրյանի համոզմամբ, ամբողջ Արևմուտքում առկա են հակահայ սև ուժեր: Փրկությունը Արևմուտքի բարոյական վերանորոգման մեջ է, որը դեռևս 20-ական թթ. շեշտում էր Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջը: «Եվրոպան կորցրել է ցեղորեն ապրելու խանդը, որով և՛ սրտի մշակույթ ստեղծելու կարողությունն ու առհասարակ բարոյական ներուժականությունը», - իրավացիորեն նշում է հեղինակը: Առաջին հայացքից այս դատողությունները կարող են վերացական թվալ և նվազ օգտակար՝ իմացական առումով, և քննարկվող նյութի համատեքստից դուրս: Բայց այդպես չէ. հիրավի, տարօրինակ չէ՞, որ հայերը տասնյակ դարերի ընթացքում պատերազմ մղելով պարսիկների դեմ, այդուհանդերձ, իրենց դյուցազներգության նյութ են դարձրել հայ և սեմական ոգիների հակամարտությունը: Մինչդեռ Հայաստանը զինակցել է Պարսկաստանի հետ, երբ հարկ է եղել պատնեշ կանգնեցնել մոնղոլների և սեմական ժողովուրդների միավորման դեմ:

Ո՞րն է այս պատմական դրվագի կարևոր դասը. ժողովրդական բանահյուսության, տվյալ դեպքում՝ դյուցազներգության խոր իմացությունը իմաստասեր-պատմաբանին հնարավորություն է ընձեռել նկատելու այն, ինչ վրիպել է ուրիշ հետազոտողների հայացքից: Հարկ է նշել, որ մեր օրերում ֆրանսիացիները և այլ ժողովուրդներ ձեռնամուխ են եղել «փիլիսոփայության պատմության փիլիսոփայության» ստեղծմանը, մինչդեռ հայերս տակավին չունենք հայոց պատմության փիլիսոփայությանը նվիրված քիչ թե շատ արժեքավոր մի աշխատություն: Հայկ Ասատրյանի գիտական ժառանգությունը գալիս է որոշ առումով լրացնելու այդ բացը՝ առաջին հերթին կարևորելով ազգի պատմության ըմբռնման մեջ նրա ցեղաբանությանը, հոգեբանությանը, բարոյականությանը, գեղագիտությանը և ընդհանրապես արժեքային կողմնորոշմանն անդրադառնալու անհրաժեշտությունը: Խնդրո առանցքը ազգի ինքնությունն է՝ դիտարկված այլ ազգերի որակների բաղդատությամբ: Ընդամենը 150 էջերում ամփոփված մենագրության մեջ հայը ներկայացված է բազ-

մապիսի ազգային հարաբերություններում: Ըստ որում, այդ նյութը ներկայացվում է հայի ազգային արժանապատվությունն ընդգծելու միտումով: Որպեսզի խոսքն ավելի առարկայական լինի, Հ.Ասատրյանը դիմում է օտար հեղինակությունների: Ահավասիկ կիսաթրքացած քուրդ մտավորական Շերիֆ Փաշայի կարծիքը. հայ ժողովրդին նա պարզապես համարում է Արևելքի պանծալի դաստիարակ: Նույն կարծիքին է նաև լորդ Հենրի Լինչը՝ «Արմենիա» երկհատորանոց կոթողային աշխատության հեղինակը, որը Հայաստանը մանրագնին ուսումնասիրելուց ու շքեղորեն ներկայացնելուց առաջ մոտիկից ծանոթ է եղել Պարսկաստանին՝ այնտեղ իրականացնելով շինարարական մեծ գործեր: Ահա թե Արևելքի մեծ գիտակ այդ անձնավորությունը ինչ է գրում. «Հայերը առանձնակի ընդունակություն ունեն նոր քաղաքակրթության միջնորդը հանդիսանալու: Նրանք իրենց հարագատ են դարձրել Արևմուտքի բարձրագույն իդեալները և այնքան բարեխղճորեն և կատարյալ կերպով են յուրացնում եվրոպական մշակույթի նվաճումները, որ այդ բանում և ո՛չ մի ազգ չի կարող հավասարվել նրանց»: Այն, ինչ այս ուղղությամբ արել է Հ.Ասատրյանը միայնակ՝ այսօր մենք պարտավոր ենք անել ազգովի, քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյա տարեդարձը նշելուց հետո: Այդ մի հատիկ փաստն ինքնին բավական է հաստատելու համար, որ հայը ամենաարիագաց ազգերից է՝ Արևելքում եվրոպական իդեալների պահապանը:

«Ազգայնորեն ձևակերպյալ աշխարհայեցողության» անհրաժեշտությունը

«Մենք չունեցանք հայկականորեն հիմնավորված աշխարհայեցողություն», - ցավով փաստում է Հ.Ասատրյանը: Պատճառը. «Անձանոթ էինք մեր Էաբանական խորքին - ցեղին»: Խոհեմ չենք գտնվել և մեր ուղղությունն ու իմաստությունը չենք վերցրել ու քաղել «հայոց անցյալը վարող ուժերեն»: Օտարամոլ ենք եղել: Եվ արդյունքում կորցրել ենք ո՛չ միայն ժողովրդի մի մասը, այլև կամքի ու մտքի կենտրոնացման ունակությունը. «Մենք կշարունակենք մնալ բազմագաղափար, բազմանպատակ, բազմուղի, ուստի հատվածամոլ, ցրվողական և քաղաքականապես անստեղծագործ»:

1939-ին արտահայտված այս միտքն ասես մեր իրականության բնութագիրը լինի: Հիրավի, հանրապետությունում պաշտոնապես գործում են 100-ից ավելի կուսակցություններ, և յուրաքանչյուրը հավակնում է ժողովրդի իղձերի արտահայտիչը ներկայանալ: «Միևնույն կազմակերպությունն իր շարժումը կսկսի Հայաստանի անկախության նշանաբանով, իր գաղափարախոսությունը կհիմնավորի... նյութապաշտական վարդապետությամբ... կքարոզի համերաշխություն... թուրք տարրի հետ, ցույցեր կընեն՝ հույս դնելով եվրոպական պետությունների միջամտության վրա, կմիանա այս պետությունների կառույցին... Եվրոպայի ընկերավարական կազմակերպություններին...»:

Նշված յուրաքանչյուր դրույթ բնութագրական է վերջին տասնամյակում մեր անցած ուղուն: Եվ այս դիտողության իմացությունը, թերևս, մեզ օգնեք խուսափել ավելորդ խարխափումներից: Ցավոք, մեր ժողովրդի հոգևոր սեփականությունը չի դարձել Հ.Ասատ-

րյանի նման իմաստուն մի անձնավորության համապատասխան ժառանգությունը: Ահա թե ինչու «հայ մտավորականությունը ընդունակ չէ մետաֆիզիկական խորքով և պատմա-իմաստասիրորեն հիմնավորված հայկական աշխարհայեցողություն ստեղծել», - ցավով ժամանակին խոստովանել է նա:

Արժե նշել, որ դեռևս 19-րդ դարի կեսին Մ.Նալբանդյանը մտահոգված է եղել Լազարյան ճեմարանի իր սաների մեջ հայերեն մտածելու կերպը սերմանելու հարցով: Պետրոպավլովյան բանտախուց այցելած նախկին սանը (Հովհաննիսյան) ուսուցչից փորձել է ավելի հիմնավոր բացատրություններ ստանալ: Խնդիրն ունի բնագանգական խորք, որին և անդրադառնում է Հ.Ասատրյանը: Այն առնչվում է մարդու և հավիտենականության գաղափարի կապին, հայրենիքը որպես անձի էության հիմքի ըմբռնմանը, միով բանիվ՝ աշխարհայեցողության էաբանական խորքին: Այս հիմնահարցը տարբեր հարթություններով ներկայացված է Հ.Ասատրյանից մնացած միակ մենագրության մեջ, ըստ որում, հայոց պատմության հանգուցակետերի մեկնաբանման հենքին:

Հանճարը և չարագործն անհամատեղելի երևույթներ են, սակայն տաղանդն ու ստահակը երբեմն հանդես են գալիս նույն անձի մեջ, ուստի ստեղծագործողի մասին խոսելիս հարկ է անդրադառնալ նրա մարդկային էությանը:

Հայկ Ասատրյանն այդ առումով մի զարմանալի ներդաշնակ անձնավորություն է: Դժբախտաբար, հանրությանը հայտնի ստեղծագործողի հոգևոր կյանքն ընդհատվել է 1944թ., երբ Նժդեհի հետ միասին նա ձերբակալվեց խորհրդային կառավարության կողմից: Այնուհետև շուրջ 12 տարի նա կյանք է մաշել դաժան բանտերում: Աքսորավայրում այդ տարիների նրա գրառումները մեզ չեն հասել՝ բռնագրավվել են: 1955թ. արքայից վերադառնալուց հետո, իր ընտանեկան ողբերգության վկան դառնալով, նա՝ այլևս ազատության մեջ, կորցնում է դիմադրողական ոգին և կնքում մահկանացուն (1956թ. հունվարի 13-ին): Փաստորեն, նրա ստեղծագործական կյանքի թելը կտրվել է 44 տարեկան հասակում: Մեծ կորուստ հայ մտքի պատմության համար:

Մեր օրերում շատերին է հատուկ կոմունիստական անցյալի կարոտաբաղձությունը, երբ մարդիկ նյութապես ավելի լավ էին ապրում: Արժե մեկ-մեկ հիշել, թե այդ «լավ օրերն» ինչ դաժան էին և ինչ կորուստներ ունեցանք հատկապես մենք՝ հայերս:

Չըրջանցելով իմաստասիրության ասպարեզում հայ մտածումի անարդյունավետության օբյեկտիվ հանգամանքները՝ Հ.Ասատրյանը վեր է հանում մեր ենթակայական (սուբյեկտիվ) մեղքերը, այն է՝ չունեցանք հին ճշմարտությունները թոթափելու և նոր ճշմարտություններ որդեգրելու կամք, ասել է թե՛ «մեր կյանքի ու գործերի մեջ գիտականություն չմտցրինք», տարվեցինք մտավոր մակերեսայնությամբ: Հույժ արդիական է հնչում հեղինակի հետևյալ դիտարկը. «Այսօր, մեր կյանքի որ կողմն էլ վերցնենք՝ գիտականության փոխարեն հանդիպում ենք բանդագուշանքի, մտածումի փոխարեն՝ հույզի, ձևի փոխարեն՝ քառսի, կազմակերպության փոխարեն՝ անկանոնության»:

Իմաստասիրական ոգորումը համարելով ստեղծված իրավիճակից դուրս գալու

նախապայման՝ Հ.Ասատրյանը սթափության է կոչում հայ մտավորականությանը, որը (չնչին բացառությամբ) «ոչ ցեղի ամոթանքն ապրելու առաքինություն ունի, ոչ էլ ինքնափրկության հավատ»: Եվ դա այն դեպքում, երբ ունենք «մի հայրենիք՝ վեհակառույց մի բարձրավանդակ - վերձանե՞լ ենք նրա բնության խորհուրդները:

Ունենք մերթ փառքով օծված, մերթ մրով ծեփված մի պատմություն. իմաստասիրե՞լ ենք նրա մասին, ծանոթացե՞լ նրա հատկորոշ ելևէջներին, նրա զարգացման ներքին օրենքներին, ղեկավար սկզբունքներին:

Ունենք կենսական և հոգեկան բարձր կարողություններով օժտված մի ժողովուրդ - կենսաբանական օժտվածության (բիոլոգիական դինամիկա) անսպառ մի շտեմարան, ուսումնասիրե՞լ ենք նրա մարդահոգեբանական յուրահատուկ գծերը, փորձե՞լ ենք գիտական լույսի տակ դնել նրա առաքինություններն ու մոլությունները, սրբագրել նրա հոգեբանական թերիները, մշակել՝ դրական կողմերը» [2, էջ 11]:

Հ.Ասատրյանն ուրվագծում է մտավորականությանը ներկայացվող մի ամբողջական ծրագիր «ազգայնորեն ձևակերպյալ մի աշխարհայեցողության», որը պետք է լինի «համահայկական զգացում»: Հ.Ասատրյանն ինքն է գործնականում օրինակ ցույց տալիս, որ շատ կարևոր է, ստեղծելով «փիլիսոփայական-գիտական ամսագիր», ինչը պետք է դառնա հայոց գաղափարաբանության կառույցի հիմնասյունը:

Այս հիմնահարցի լուծման ճանապարհին հառնող առաջին պահանջը համակարգային մոտեցումն է՝ «հայ մտածման արդյունքները» հորինվածքի (սիստեմ) ձևով ներկայացնելը, որը ենթադրում է հայ փիլիսոփայության գծերի, նրա պատմության տարրերի բացահայտում, այդ լույսով հայ հոգևոր խմորումների, ինչպես նաև որոշ աշխարհայեցողությունն և դրանք հոսանքների գաղափարաբանության ուսումնասիրությունը: Հ.Ասատրյանը հատուկ ուշադրություն է դարձնում մեր ցեղի հոգեբանական կազմակերպման գործին, համացեղային կորովի խթանմանը: Գերխնդիրը՝ կյանքի խռովքը ստեղծագործ ուժի վերածելու նպատակն է:

Պատմական գիտելիքը այն դաշտն է, որի իմաստավորումն ապահովում է ազգի հոգևոր աճը, ուստի պատմության փիլիսոփայությունը, ազգի կյանքի տարերային ցնցումների և դեպքերի տրամաբանական կապերի իմացությունը հոգեճանաչողության հիմքն են, ինչը «մեր վաղվա ռազմարվեստի» անկյունաքարն է հանդիսանալու: Ահա թե ինչու Հ.Ասատրյանը վստահ չեշտում է, որ ազգային գաղափարախոսության հիմքը կազմող այս ճշմարտությունները վերացական ըմբռնումներ չեն, այլ կյանքում հաղթանակներ նվաճելու գործնական միջոցներ:

Վերջաբան

«Հայրենիք և ցեղ». սրանք են երկնքի տակ ամենահավիտենական արժեքները. այս է Հ.Ասատրյանի հավատամքը: 21-րդ դարը համատարած ահաբեկչությամբ ու հասարակական ցնցումներով սկսվեց, քաղաքակրթությունը անպաշտպան վիճակում է հայտնվել:

Այդ չարաբաստիկ երևույթն Ա.Պանարինը փորձում է բացատրել գլոբալացման կողմնակիցների կողմից ազգային մշակութային վարքականոնների հանդեպ ոտնձգությամբ: Այդ ամենի հետևանքով ակտիվանում են մինչլուսավորչական դարաշրջանի անիծյալ չարքերը՝ կլանային, վաշխառուական-մաֆիոզ տարրերը: Եվ ամեննին էլ տարօրինակ չէ, որ այդ գործընթացում իրենց չարաբաստիկ դերն ունեն այն որոշակի շրջանները, որոնք իրենց հեռու պահելով «բնիկներին» (տուգեմեց) հատուկ ազգային սկզբունքներից՝ փութաջանորեն քարոզում են գլոբալացման քաղաքականություն: Հ.Ասատրյանն այս հարցում ևս օգնում է մեր ժամանակակցին հասկանալու դեպքերի ընթացքի տրամաբանությունը՝ հային սթափության կոչելով՝ կուլ չգնալ անտոհմ գաղափարախոսների խոստումներին:

Ամփոփենք. սույն հոդվածի համար որպես մուտք է ընտրված Մ.Խորենացու պատգամը՝ դասեր քաղել պատմությունից: Ըստ Հ.Ասատրյանի, դեռևս 5-րդ դարից հայ մտավորական ընտրանին, իր ստեղծագործական ճիգերի մեջ իմաստասիրական գիծը մտցնելու անհրաժեշտություն զգալով, նպատակ ուներ «ժամանակի գիտական ոգին կայտառ պահել Հայաստանում»: Սակայն Վերածննդի դարաշրջանից սկսվում է հոգևոր կյանքի անկման մի շրջան. խորթացանք իմաստասիրելու արվեստին՝ չօգտվեցինք Ռենեսանսի և Լուսավորության դարաշրջանների գիտական ոգորումներից, իսկ 19-րդ դարից սկսված մեր վերածնությունը «չկարողացավ հօգուտ գիտական-իմաստասիրական մտածման արդյունքների որդեգրման՝ մի ուղեփոխություն առաջ բերել»: Փաստորեն, Հայաստանը դուրս էր մնում համաեվրոպական զարգացման շավղից: Այս ամենը ցավալի համարելով՝ Հ.Ասատրյանը շատ ավելի ճակատագրական է համարում մեկ այլ հանգամանք, որը ենթակայական բնույթի է: Նույն այդ ազգային վերածնության շնորհիվ ասպարեզից վտարված գրաբարի հետ՝ «հների ստեղծած արժեքներն էլ դարձան գրեթե մեռյալ տարր»:

Փաստորեն, դարերի ընթացքում հոգևոր բարձր արժեքներ ստեղծած ազգը հայտնվեց «կոտրած տաշտակի» առջև՝ որպես թոթովախոս մանուկ: Նախնիների մտավոր արժեքների թերագնահատման պայմաններում գերագնահատվեց «առօրյան»: Դա հիմք հանդիսացավ գործնականում անտեսելու այն ճշմարտությունը, թե «ժողովուրդների պատմությունը ոճական մի առաջընթաց է (դինամիկական մի պրոցես), որի մեջ ներկան պայմանավորված է անցյալով»: «Առօրյան» մի դատարկություն է, որ ուզում է լցվել պատմագործ ես-ի ինքնարձանացմամբ, դառնալ հավիտենարժեք «ներկա»: Հստակ ըմբռնելով այս ճշմարտությունը՝ Հ.Ասատրյանը ողբում է այն ազգի վիճակը, որն իմաստասիրության 15 դարերի պատմություն ունենալով՝ հայտնվել է ամոթալի վիճակում: «Այսօր ողբալի է մեր գիտական պաշարը և ամոթալիորեն աղքատ՝ մեր փիլիսոփայական գրականությունը», - գրում է նա:

Հ.Ասատրյանի «Վերանորոգչական շարժման սկիզբը» (1932թ., «Խոռվք» ամսագիր) խմբագրական բնույթի հոդվածն ուշադրության արժանի է ոչ միայն որպես քերթողահայր Մովսեսի «Ողբին» համահունչ արձագանք, այլև՝ իր շինիչ ուղղվածությամբ: Դա լոկ տրտունջ ու ողբ չէ, այլ գործելակերպի ծրագիր՝ փիլիսոփայական հիմնավորմամբ:

Աղբյուրներ և գրականություն

1. *Ասատրյան Հ.*, Հատընտիր, Երևան, 2004:
2. *Ասատրյան Հ.*, Վերանորոգչական շարժման սկիզբը, հոդվածների ժողովածու, Երևան, 1995:
3. *Մարինյան Ս.*, Հայ գաղափարաբանություն. պատմաքննական տեսություն, Երևան, 1998:
4. *Խուրշուղյան Լ.*, Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 2001:
5. *Столпкин П.А.*, Нам нужна великая Россия, Москва, 1991.
6. *Боков Х.Х., Алексеев С.В.*, Российская идея и национальная идеология народов России, Москва, 1996.
7. *Лебон Г.*, Психология народов и масс, С. Петербург, 1995.
8. *Фромм Э.*, Анатомия человеческой деструктивности, Москва, 1994.
9. *Юнг К.Г.*, Душа и миф. шесть архетипов, Киев-Москва, 1997.
10. *Панарин А.*, Искушение глобализмом, Москва, 2002.
11. *Հալախյան Ս.*, Ազգային և պետական գաղափարախոսություն. Էություն, բովանդակություն, Երևան, 2002:
12. *Մթալյան Է.*, Նարեկացին շվարած կամ մարդկային գոյի մետաֆիզիկական հեռանկարները, «Գարուն», Երևան, 1991: